ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1
№ ԳՀԾՁԲ-20-10/7-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 05 **.03.2020թ.**

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետ Ն. Յոլչյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետ «Պատվիրատու», մի կողմից և «Մեսրոպ Աղազարյան Վիգենի» Ա/Ձ-ն մյուս կողմից՝ այսուհետև՝ «Կատարող», երկուսը միասին՝ Կողմեր, հիմք ընդունելով 10.12.2019թ. կնքված № ԳՀԾՁԲ-20-10/7-1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.15 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը, հիմք ընդունելով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու փաստը, փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն Համաձայնագիրը՝ սահմանելով Ծառայությունների գնման և վճարման ժամանակացույցեր՝ համաձայն Հավելված № 1-ի և 2-ի:

1.2 Կատարողը պարտավորվում է սույն Համաձայնագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Պատվիրատուին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետև՝ Ստացող) մատուցել՝ Պայմանագրի տեխնիկական բնութագրերով նախատեսված ծառայությունների (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն № 1 Հավելվածով սահմանված գնման ժամանակացույցի, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել այդ Ծառայությունը և վճարել դրա համար՝ վճարման ժամանակացույցով՝ հավելված N 2-ով, նախատեսված ժամանակահատվածում:

2. Գինը և վճարման կարգը

2.1 Սույն Համաձայնագրի ընդհանուր **առավելագույն** գինը կազմում է **7,000,000 (յոթ միլիոն) ՀՀ դրամ**, որը ներառում է Համաձայնագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ նաև հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

2.2 Պատվիրատուն իրեն հանձնած Ծառայության դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 4.2 կետով նախատեսված կարգով, **15 բանկային օրվա ընթացքում բայց ոչ ուշ, քան 25.12.2020թ.**:

3. Այլ պայմաններ

3.1 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ծառայությունների մատուցման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4 Սույն Համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.5 Սույն Համաձայնագիրը կազմված է 4 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի N 1 և 2 Հավելվածները հանդիսանում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.6 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում **ՀՀ ՊՆ ԿԾ և ԱԲ վարչությունը:**

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	Ա/Ձ Մեսրոպ Աղազարյան Վիգենի
ՀՀ, ք. Երևան, Բագրևանդի 5	ՀՀ, Արարատի մարզ, գ.Սուրենավան,
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	Արցախի 15 տուն
Հ/Հ 900011144079	«ՎՏԲ Հայաստան բանկ» ՓԲԸ
ՀՎՀՀ 02522157	Հ/Հ 16041034018800
ՀՀ ՊՆ ՆՏԱ Դեպարտամենտի պետ	ՀՎՀՀ 84487224
Ն. ՅՈԼՉՅԱՆ	

Հավելված N 1
N ԳՀԾՁԲ-20-10/7-1 պայմանագրին կից
N 1 Համաձայնագիր

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Ծառայության անվանում	Առավելագույն գին /դրամ/	Գնման ժամանակացույց
1.	**Շենքերում տեղակայված էլեկտրական սարքերի վերանորոգման և պահպանման ծառայությունների (օդափոխության համակարգերի սպասարկման ծառայությունների)**	7,000,000	Ծառայությունների մատուցումը իրականացվում է ՊՆ ԿՇ և ԱԲՎ հայտերի հիման վրա, I-IV եռամսյակների ընթացքում, բայց ոչ ուշ քան 20.12.2020թ.-ը:

Ծառայության			
Հ/հ	Անվանումը **Շենքերում տեղակայված էլեկտրական սարքերի վերանորոգման և պահպանման ծառայություններ (օդափոխության համակարգերի սպասարկման ծառայությունների)**	Չափման միավորը	Յուրաքանչյուր տեսակի առավելագույն միավոր գները՝ ՀՀ դրամ
1	Ներածման համակարգի ստուգում և դիտարկում խցերի մաքրում փոշուց և աղտոտվածությունից	1 անգամ	4050
2	Զտիչների մաքրում փոշուց և աղտոտվածությունից	1 անգամ	2300
3	Օդատաքացուցիչների դիտարկում, քիմմաքրում և ջերմաստիճանի ստուգում	1 անգամ	3000
4	Ներածման համակարգի հերմետիկության ստուգում և վերականգնում	1 անգամ	2800
5	Արտածման համակարգի հերմետիկության ստուգում և վերականգնում	1 անգամ	2200
6	Ճկուն միացումների փոխարինում	1 անգամ	6000
7	Փականների մեխանիզմի ստուգում և մաքրում	1 անգամ	2300
8	Ռեկուպերատորի ստուգում, դիտարկում և մաքրում	1 անգամ	12000
9	Թրթռամեկուսիչների ստուգում և ծգում	1 անգամ	2000
10	Փափուկ ներդիրների ստուգում	1 անգամ	1600
11	Փափուկ ներդիրների փոխարինում	հատ	8500
12	Կ/խ օդամղիչների դիտարկում և սպասարկում	1 անգամ	2000
13	Ներածման և արտածման համակարգերի էլ համակարգերի կառավարման բլոկի կարգաբերում	1 անգամ	4300
14	Ներածման և արտածման համակարգերի թողարկիչների փոխարինում	1 անգամ	8600
15	Նոր օդազտիչների տեղադրում 500x500մմ	հատ	20000
16	Նոր օդազտիչների տեղադրում 800x500մմ	հատ	35000
17	Ձայնախլացուցիչի տեղադրում 500x500մմ	հատ	8400
18	Ձայնախլացուցիչի տեղադրում 800x500մմ	հատ	11300
19	Չիլլերի կոնսերվացում	1 անգամ	16400
20	Չիլլերի ստուգում և թողարկում կոնսերվացումից հետո	1 անգամ	14800
21	Չիլլերի կառավարման բլոկի ստուգում	հատ	20000

22	Չիլլերի կառավարման բլոկի ծրագրավորում	հատ	35000
23	Էլ.համակարգի ստուգում և կարգաբերում	1 անգամ	7500
24	Չիլլերի կոնդենսատի հեռացման համակարգի կարգաբերում	1 անգամ	5000
25	Չիլլերի R22 սառնագենտի լիցքավորում	կգ	5500
26	Սառնագենտի լիցքավորում R410	կգ	10200
27	Սառնագենտի զտիչի փոխարինում	հատ	13600
28	Չիլլերի գազի ճնշման տվիչի փոխարինում	հատ	8400
29	Չիլլերի յուղի ճնշման տվիչի փոխարինում	հատ	9600
30	Չիլլերի կոմպրեսսորի յուղի ստուգում և լիցքավորում	կգ	3300
31	Սառնագենտի կորուստի հայտնաբերում և նորոգում	տեղ	5000
32	Չիլլերի կոմպրեսսորի նորոգում	հատ	360000
33	Չիլլերի հովացուցիչի նորոգում	հատ	39000
34	Թողարկիչի փոխարինում	հատ	18000
35	Միաֆազ ավտոմատ անջատիչի 16-63Ա փոխարինում	հատ	2500
36	Եռաֆազ ավտոմատ անջատիչի 25-100Ա փոխարինում	հատ	3500
37	Ֆանկոյի ջերմափոխարինիչի խցանման վերացում	հատ	6800
38	Ֆանկոյի ռելեի փոխում	հատ	8000
39	Ֆանկոյի էլ. կառավարման բլոկի փոխում	հատ	65000
40	Ֆանկոյի փականների նորոգում	հատ	10000
41	Ֆանկոյի շարժիչի նորոգում	հատ	45000
42	Ֆանկոյի կոնդենսատի հեռացման համակարգի կարգաբերում	է-կ	18500
43	Ֆանկոյի ջրի զտիչի մաքրում	հատ	2100
44	Ֆանկոյի ջրի խողովակների ջերմամեկուսացման վերականգնում	գծմ	1400
45	Ֆանկոյի օդի զտիչի մաքրում	հատ	1200
46	Ֆանկոյի փականի փոխարինում	հատ	5000
Ընդամենը			876,650

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ Դեպարտամենտի պետ

Ն. ՅՈԼՉՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

Ա/Ձ Մեսրոպ Աղազարյան Վիգենի

Մ. ԱՂԱԶԱՐՅԱՆ

Հավելված N 2
N ԳՀԾՁԲ-20-10/7-1 պայմանագրին կից
N 1 Համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Հ/հ	Ծառայության անվանում	CPV կոդ	Առավելագույն գին/դրամ/	Վճարումը նախատեսվում է իրականացնել 2020թ., համապատասխան ամիսների, այդ թվում՝								
				Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր, բայց ոչ ուշ, քան 25.12.2020թ.
1.	**Շենքերում տեղակայված էլեկտրական սարքերի վերանորոգման և պահպանման ծառայությունների (օդափոխության համակարգերի սպասարկման ծառայությունների)**	50711100/501	7,000,000	1,750,000	1,750,000	1,750,000	3,500,000	3,500,000	3,500,000	7,000,000	7,000,000	7,000,000

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ Դեպարտամենտի պետ

Ն. ՅՈԼՉՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

Ա/Ձ Մեսրոպ Աղազարյան Վիգենի

Մ. ԱՂԱՋԱՐՅԱՆ